



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

06 մայիսի 2011 թվականի N 171-Ա
ք.Հրազդան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-Ի
N 35-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Աբովյանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2011 թվականի ապրիլի 22-ի N155, «Հրազդանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2011 թվականի ապրիլի 29-ի N130, «Չարենցավանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2011 թվականի ապրիլի 29-ի N02/130, «Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2011 թվականի ապրիլի 28-ի N1-177, «Հրազդանի մարզային արյան բանկ» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2011 թվականի ապրիլի 30-ի N 07/11 գրությունները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2011 թվականի փետրվարի 1-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության 100% պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2011 թվականին բնակչությանը վճարովի սկզբունքով տրամադրվող հիվանդանոցային, արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակների ու սակագների հաստատման մասին » N-35 Ա որոշման.

1/ 1-ին կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ ենթակետերով հաստատված NN 1, 2, 3, 4, 6 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ համաձայն NN 1,2,3, 4, 6 հավելվածների

2/ 2-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը ճանաչել ուժը կորցրած:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ